ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 621

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

28 հոկտեմբեր 2011թ.

ԴԻԼԻՋԱՆԻ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 54/1 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Լուսինե Խաչատրյանը՝ իր սեփականությունը հանդիսացող, Դիլիջանի Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 54/1 հասցեի 356.0քմ հողամասից առանձնացվող 175.0քմ հողամասին նոր հասցե տրամադրելու խնդրանքով:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Լուսինե Խաչատրյանին պատկանող, Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 54/1 հասցեի 356.0քմ հողամասից առանձնացվող 175.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Մաքսիմ Գորկու փողոց թիվ 54/2, մնացած 181.0քմ հողամասը թողնել նախկին՝ Մաքսիմ Գորկու փողոց թիվ 54/1 հասցեով:
2. Պարտավորեցնել քաղ. Լուսինե Խաչատրյանին.
«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 622

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

28 հոկտեմբեր 2011թ.

ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 302/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ համաձայն 1988թ. հոկտեմբերի 8-ի և 2006թ. փետրվարի 27-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերի, Դիլիջանի Կալինինի փողոցի թիվ 302 հասցեի բնակելի տան և 300.0քմ տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերել քաղ. Արաիկ Սահակյանը: Վերջինս դիմել է Դիլիջանի քաղաքապետարան նշված բնակելի տան սպասարկման հողամասի սահմանները ճշտելու և հողհատկացման փաստաթղթային հիմքերը վերականգնելու խնդրանքով:
Հանձնաժողովը նշում է, որ կատարված տեղազննման և չափագրման արդյունքում կազմված սխեմայի համաձայն նշված տնամերձ հողամասի փաստացի չափը կազմում է 600.0քմ, որից 300.0քմ-ի նկատմամբ քաղաքացին ունի սեփականության իրավունք, իսկ 300.0քմ-ն փաստացի ավել օգտագործվող հողամաս է: Վերջինս չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ: Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով նշված 300.0քմ հողամասի նկատմամբ քաղ. Արաիկ Սահակյանը ձեռք է բերում սեփականության իրավունքը: Նշված տնամերձ հողամասում առկա է բնակելի տան ինքնակամ կցակառուցում և ինքնակամ կառուցված օժանդակ շինություն, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001 թվականը:
Այսպիսով, Կալինինի փողոցի թիվ 302 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի չափը կազմում է 600.0քմ/կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության

2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի 16 կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել Դիլիջանի Կալինինի փողոցի թիվ 302 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի փաստաթղթային հիմքերը՝ 600.0քմ մակերեսով, քաղ. Արաիկ Սահակյանի /ծնված՝ 16.05.1963թ./ սեփականության իրավունքով:
2. Տնամերձ հողամասում առկա բնակելի տան ինքնակամ կցակառուցումը և ինքնակամ կառուցված օժանդակ շինությունը համարել օրինական՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
3. Կալինինի փողոցի թիվ 302 հասցեի բնակելի տանը և 600.0քմ տնամերձ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Կալինինի փողոց թիվ 302/1:
4. Պարտավորեցնել քաղ. Արաիկ Սահակյանին.
1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ